

ՅԵՐԻՑՈ
ՅԵՐԵՔ ԽՈՃԴԻԿՆԵՐԻ
ՅԵԿ



ՔԱՐ ԳԱՅՆԻ ՄՑԻՒՆ

Յ.Ս.Խ.Յ.

ՊԵՏԱԿԱՆ ՅՐԱՎՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1936

8 DEC 2017

ՀԵԳԻԱԹ

ՅԵՐԵՎԱՆՈՂԻԿՆԵՐԻ
ՅԵՎ
ԶԱՐ ԳԱՅԼԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1 9 3 6



ՅԵՎ ԶԱՐ ԳԱՅԼԻ ՄԱՍԻՆ

1

Անգլերենից փոխադրած Սերգեյ Միխայլովի տեկստի յեկ կինոնկարի հիման վրա վերամշակեց յեկ չափածոյի վերածեց Հ. Տ. Ավագյան

Պատ. Խմբագիր՝ Եղ. Զ ո փ ու ր յ ա ն
Տեխն. Խմբագիր՝ Ա. Խ ո ւ դ ա վ ե ր դ յ ա ն
Մրգագրիչ՝ Ռ. Ն ե ա ն յ ա ն

ԴԼԱՎՈՒԹԻՒՆ Ա—1183 հրատ. 3877
Պատվիր 1132, տիրաժ 5000

Գետերատի տպարան, Յերևան, Ա Դ Կ Ա Ն Յ Ա Ն Յ Ի, 4



11-269879x

Կանաչ անտառում

Միասին ապրում,

Խաղ ելին անում

Ու զվարճանում

Յերեք խողիկներ.

Յերեք խաղընկեր,

Յերեքն ել յեղբայր,

Շատ նման իրար՝

Կլոր ու թմբիկ,

Վարդադուչն, չաղլիկ,

Դնչերը՝ կըլոր,

Պոչերը՝ վոլոր:

Մեկի անունն եր — Նուֆնուֆ,

Մյուսի անունն եր — Նիֆնիֆ,

Իսկ յերրորդին ել — Նաֆնաֆ:

Նուֆնուֆն ուներ մի ֆլեյտա,

Նիֆնիֆն ուներ մի ջութակ,

Իսկ Նաֆնաֆն ել յերգ եր ասում

Ու յերեքով մեկտեղ պարում՝

— «Մեր ես կանաչ անտառում,

«Անտառում, անտառում,

«Ապրում ենք մենք և խաղում,

Յեվ յերգում և պարում:

«Ես աշխարհում լիառատ,

«Լիառատ, լիառատ,

«Եսպես կապրենք միշտ ազատ,

«Միշտ ազատ, միշտ ազատ»:

Յեկ բայստի արևոտ
 Կանաչներում ծիծաղկոտ
 Շուռ են գալիս դլսի վրա,
 Թավալ տալիս մեջքի վրա:
 Իսկ գիշերը
 Խոզիկները,—
 Ամեն մեկը մի ծառի տակ,
 Ամեն մեկը մի քարի տակ,—
 Քուն են մտնում
 Հանգիստ գտնում:
 «Մին ել մի որ Նաֆնաֆն ասաց՝
 «Չմոռանաք, վոր մեր դիմաց
 Զույնոտ ձմռան
 Ցուրտ որեր կան:
 Յեկեք, տղերք, մենք մեզ համար
 Մի տուն շինենք տաք ու հարմար,
 Ու միասին
 Ապրենք միջին»:
 Բայց Նիֆնիֆը լավ խնդաց
 Ու քթի տակ մրթմրթաց՝
 «Դեռ հեռու յե ձմեռը,
 Շատ կա մինչև ցրտերը»,
 Ու խոտերում կանաչ սիրուն
 Գըլըխկոնձի տվեց իսկույն:
 — «Յերբ ուզենամ՝
 Տուն կունենամ»,—
 Նուֆնուֆն եսպես առարկեց,
 Ու ջրկալի մեջ պառկեց:
 — «Յես ինձ համար մեն-մենակ
 Կկառուցեմ մի տնակ»,—
 Ասաց Նաֆնաֆն յեղբայրներին
 Ու տեղ վնտուեց իր տնակին:
 Յերկու անհոգ յեղբայրներ
 Խաղով ընկան անտարբեր.
 Խաղով ընկան չեն շաապում,

Վոր տուն շինեն լայն բացատում։
 Բայց մի որ ել նրանք տեսան,
 Վոր սառուց ե բռնել ջրկան:
 — «Միթե արդեն ցուրտը յեկավ,
 Ու սե արեց մեր որը լավ»,—
 Խոզիկները միտք արին
 Ահ ու դողը սրտներին:
 Մրթմրթալով աղիողորմ,
 Ամեն մեկը գնաց մի կողմ,
 Գործի անցան շտապով,
 Վոր տուն շինեն ապահով:
 Նիֆնիֆն իրեն գործը գիտեր՝
 Իսկույն տնկեց բարակ փայտեր,
 Դեղին ծղոտ հավաքեց
 Պատ ու կտուր պինդ ծածկեց,
 Ապա դրեց դունակը,
 Ու ձեռքն առավ ջութակը,
 Մի ուրախ պար նվագեց,
 Հետն ել սիրուն նա յերգեց։
 «Ուր վոր կուզես ման արի,
 «Ման արի, ման արի,
 «Եսպես տնակ չես ճարի,
 «Զես ճարի, չես ճարի»:
 Ու ապահով,
 Խաղ ու պարով
 Նուֆնուֆի մոտ գնաց նա,
 Վոր նրա գործն իմանաւ:
 Նուֆնուֆն ել այդ առավոտ,
 Իր բացատում արևոտ,
 Ճյուղերից ու շիվից դալար
 Տուն եր շինել իրեն համար:
 Յերբ յեկողին նկատեց,
 Յերգեց հպարտ, նվագեց՝
 — «Փոթորիկից չեմ վախում,

«Զեմ վախում, չեմ վախում,
«Ահա ունեմ իես լավ տուն,
«Մի նոր տուն, ամուր տուն»:
Յերկու լեզրայր շատ ուրախ,
Ինքնահավան ու վստահ,
Նախնաֆի մոտ գնացին՝
Նայեն նրա տնակին:
Իսկ նախնաֆը չե թե տնակ,
Ալ աղյուսից, նա մեն-մենակ
Տուն եր շինում գեղեցիկ,
Վոր վոչ անձրև, փոթորիկ,
Վոչ ել են ցուրտ քամին ձմռան
Նրան լերբեք վաս շտան:
Տունը ուներ մի ամուր
Կոկիկ, սիրուն կաղնի դուռ,
Սողնակը հաստ լերկաթից,
Վոր հարևան անտառից
Բրդոտ, աղան գալլ չար
Հանկարծ մի որ ներս չգար:
Յեկ նիֆնիֆը,
Յեկ նուֆնուֆը
Շատ զարմացած,
Բերանը բաց,
Նրա շինած տունը տեսան
Ու գոչեցին միաբերան՝
— «Նախնաֆ, ասա,
Ի՞նչ բերդ ե սա՝
Զլինի թե ինչպես ռազմիկ—
Պատրաստվում ես պատերազմի»:
Նախնաֆը լուս, իրեն հերթին
Մի նոր աղյուս դրեց պատին,
Ապա նայեց ու հանդարտ
Պատասխանեց շատ հպարտ
— «Յես խելոք եմ ամենից,


«Ամենից, ամենից.
«Ճուն եմ շինում աղյուսից,
«Աղյուսից, աղյուսից:
«Յերբեք գազանն այս գոնով,
«Պինդ դռնով, լավ դռնով
«Ներս իչ խոթվի իր դնչով,
«Վատ դնչով, չար դնչով»:
Խողիկները զարմացան՝—
Ասին, «ախպեր, ինչ գազան»:
— «Բան չգիտեք գալլ մասին»:
Յեկ մի աղյուս դրեց կրկին:
Յերկու խողիկ միասին
Ուրախ անհոգ խնդացին,
Ֆլեյտա, ջութակ ձգեցին
Ու իրար հետ լերգեցին՝
— «Թող, վոր լինի մի չար գալլ,
«Մի չար գալլ, մի չար գալլ,
«Ուր ես գալիս, հիմար գալլ,
«Ծերուկ գալլ, դաժան գալլ»:
Ու խողիկները
Ուրախ պարելով,
Ծուռ պոչիկները
Թափահարելով
Շատ ինքնահավան,
Ճանապարհ ընկան:
Յեկ ճանապարհին
Նորից զլեցին
Յերգերն ու պարը,
Ու վող անտառը
Արթնացավ քնից,
Կարծես հարսանքից:
Արթնացավ նաև
Աղմուկից ահեղ

Ծառի տակ քնած
 Չար գալը քաղցած:
 — «Ես իմ անտառում
 Ո՞վ ե գոռզոռում», —
 Մըթմըթաց հանկարծ
 Գալը արթնացած:
 Բերանը լիզեց,
 Ականջը լարեց,
 Վեր թռավ տեղից
 Ու ծառի տակից
 Պոկ յեկավ դեպի
 Խորքը անտառի,
 Դեպի այն տեղը,
 Ուր խոզիկները
 Զեն ձենի տված,
 Խաղերով տարված
 Վոնց ելին պարում
 Ու զիւ աղմկում:
 Յեվ խոզիկներն հանկարծ՝ տեսան,
 Վոր անտառից մի չար՝ գազան
 Գորշ, անճոռնի,
 Սարսափելի,
 Յերախը բաց,
 Լեզուն կախած,
 Դեպի իրենց ե գալիս ահա,
 Կուլ պիտի տա նըանց հիմաւ
 Ճղճղացին ամբողջ ձենով,
 Զենը թնդաց անտառներով:
 Ու սարսափից են ահագին
 Խոզիկները դողդողացին,
 Դողդողացին վոտով, գլխով
 Ու վազեցին ճանապարհով,
 Դողացնելով պոչիկները,
 Վեր ցցելով դնչիկները:


Գալը վոռնաց, ու գազագեց,
 Յետևներից արագ վազեց
 Ու քիչ մնաց, վոր Նիֆնիֆնի
 Վոլոր ու կարճ պոչից բոնի:
 Բայց ծուլ յեղավ Նիֆնիֆն արագ
 Դուրս պրծացրեց պոչը բարակ,
 Ներս ընկավ տուն ու մի շնչից
 Դուրս զարկեց գալի դնչին:
 Ու չար գալը մռնչաց՝
 «Դե շուտ արա, դուրս բաց,
 Թե չե, գիտես, յես կուռչեմ,
 Ենպես ամուր կփչեմ,
 Վոր տնակդ հենց հիմա,
 Մինչե հիմքը փուլ կդա»:
 Բոնեց դոնից ու թափ տվեց՝
 Դուրս դողաց ու չբացվեց:
 Ու յետ քաշվեց գալը-գազան,
 Կուրծքն ուրցրեց ինչպես կաթսան,
 Յերեք անգան վչեց մի լավ
 Ու տնակը ցրիվ յեկավ,
 Ցրիվ յեկավ չորս կողմից,
 Կարծես ուժեղ, մեծ հողմից:
 Միան մնաց դուրս կանգնած,
 Են գազանի դնչի դիմաց,
 Ու քիչ մնաց, վոր գալը չար
 Խեղճ Նիֆնիֆին կուլ պիտի տար:
 Բայց խոզիկը հազիվ պրծավ,
 Քամու նման նա ոլացավ
 Ու շունչ առավ Նուֆնուֆի մոտ:
 Իսկ գազանը գորշ ու բրդոտ,
 Հասավ թե չե փալտա տանը,
 Ուժգին դիպավ փակ դռանը,
 Իսկ տան ներսից այն յերկուսով
 Դուռն են պահում ամբողջ ուժով՝



Շատ են վախում խողիկները,
 Վոնց են դողում պոչիկները:
 Լսվեց գալի ձայնը ահա՝
 — «Ճես փոխեցի միտքս հիմա,
 Ինչիս եք պետք քոսոտ, անհամ,
 Լավ կլինի վոր տուն գնամ»:
 Եղ վոր ասաց, — «Հը, իմացմը, —
 Խողիկները ասին իրար, —
 Ել մեղ ուտել չի ուզում,
 Ասաց՝ պիտի գնամ տուն:
 Բայց խորամանկ գալը չար
 Քաշվեց մի կողմ գաղտնաբար,
 Մորթի հագավ վոչխարի,
 Կանչեց ձայնով նա բարի, —
 — «Ես, յես եմ, յե-ե-ես, խեղճ, անձար,
 Յետ մնացած մի վոչխար:
 Շատ եմ խնդրում, խողիկներ,
 Իսձ տեղ տվեք ես գիշեր»:
 Շատ եր բարի Նիֆնիֆը,
 Նույնքան բարի Նուֆնուֆը
 Ու մեկն ասաց են մլուսին՝ —
 «Արի թողնեք եղ խեղճին»:
 Դուռը մի քիչ բաց արին,
 Բայց, վոր տեսան չար գալին,
 Նորից ուժով են դռան
 Սրտապատառ դեմ ընկան:
 Ու կատաղեց գաղանը,
 Ու յետ քաշվեց գաղանը,
 Ու ուեց, փքվեց փուքսի պես
 Ու վոր փչեց փուքսի պես,
 Սաստիկ թափից փոթորկի՝
 Կտորները փալտերի
 Վեր-վեր թռան ողի մեջ,
 Դես-դեն թռան ողի մեջ,
 Յեկ տունն եղ զիլ մրրիկից



Յըիկ յեկավ իր հիմքից:
 — «Ընը՝, տեսաք, բոնեցի,
 Ել իմ ձեռքից չեք պրծնի», —
 Վոռնաց գալը, թափ առավ,
 Սև լերախով հափէարավ,
 Բայց ծուլ լեղան ու փախան
 Խողիկները ճղճան:
 Սլանում են քամու պես,
 Փոշին հանում ամպի պես,
 Յետևներից գալը չար
 Սլանում ե անդադար,
 Սլանում ե գժի պես
 Ու գոռնում ե գժի պես:
 Մին ել եղ գիժ վազքի հետ
 Գազանն արագ, ինչպես նետ
 Վոր չդիպավ հաստ ծառին,
 Մի կոշտ թռավ ճակատին,
 Ու կալծ տվին աչքերը,
 Կրակ տվին աչքերը:
 Բնկավ գետնին վոռնալով,
 Ու վերեկց խռոալով
 Խնձորները թափկեցին,
 Աղահ գալին ծածկեցին,
 Միայն դունչը դուրս մնաց,
 Լայն բերանը բաց արած:
 Խողիկները նոր թափ առան,
 Նետի նման շուտ սլացան:
 Գալը տնքաց սաստիկ ցավից
 Հազիկ լելավ կույտի տակից,




Մին դես թռավ, մին դեն թռավ,
 Խելքը նորից գլուխն եկավ,
 Ու մինչև նոր ույժ հավաքեց,
 Յետեներից նորից վազեց,
 Խողիկները գլխապատառ
 Ահա անցան դաշտ ու անտառ,
 Ու նաֆնափի տանը հասան:
 Նա փականքը բացեց դռան,
 Յեղբարներին ընդունեց տուն,
 Սողնակն ամուր գցեց իսկաւն:
 Խողիկները գժի նման
 Մահճակալի տակը մտան,
 Իսկ ծածկոցի տակից բացած—
 Պոչիկներն են ոդում ցցված,
 Պոչիկները աղիողորմ
 Տառանվում են այս ու այն կողմ:
 Ու նաֆնափը բարձր խնդաց՝
 — «Են դալն ե, վոր ձեզ յերևաց»:
 Ապա իսկույն պարը քոքեց,
 Հետն ել ուրախ բարձր յերգեց՝
 — «Ով վոր եսպես դուռ ունի,
 «Դուռ ունի, դուռ ունի,
 «Չար գազանից ահ չունի,
 «Վախ չունի, մահ չունի»:
 Մին ել, ընը՝, եղ խոսքին
 Դուռը ամսուր ծեծեցին:
 Ու նաֆնափը հարց տվեց՝
 — «Ես մեր դուռը ով ծեծեց»:
 — «Յես տներն եմ հաճախում,
 Խոզանակ եմ վաճառում»—
 Դրսից լսվեց մի կրպիտ ձայն,—
 — «Դուք ապրանքին նայեք միան»:
 Ու նաֆնափը հազիվ մի քիչ
 Բացեց դուռը, նայեց ձեղքից,



Տեսավ գալի թաթը բրդոտ,
 Խոզանակը խլեց հերսոտ
 Գալի թաթին խփեց մի լավ:
 Գալը վոռնաց, — «Ես լավ լեղավ՝
 Յերեքիդ ել յըիվ կտամ,
 Անուշ կանեմ յես ես անդամ»:
 Ու դուռն ենպես թափ տվեց,
 Տարավ, բերեց ու ցնցեց,
 Բայց չպատեց ուժը գալի
 Ու դիմացավ դուռը կաղնի:
 Ծիծաղեցին խողիկները,
 Պար բռնեցին խողիկները,
 Նվազեցին ուրախ, զվարթ
 Ու յերգեցին անվախ, հպարտ:
 Գալը նայեց շուրջը բոլոր,
 Նորից ուռցը կուրծքը հզոր,
 Փչեց նորից, ելի փչեց,
 Ու բուք յելավ, քամին շաշեց,
 Գվվաց, վշշաց ոձի նման,
 Բայց կանգնած եր տունն անսասան:
 Նորից փչեց, փչեց նորից,
 Բայց թուլացավ խեղճը զոռից

Ու դողդողաց, խիստ հեվալով,
 Յեվ ցամաքեց իր վողջ մարմնով,
 Լեզուն կախվեց,
 Աչքը շաղվեց:
 Հուլը կտրած վերև նայեց,
 Կտրի վրա տեսավ նա մեծ
 Մի ծխնելուզ լայն ու հարմար:
 Ծխնելուզով նա իր համար
 Կարող եր մի ճամփագտնել
 Ու են ամուր տունը մտնել:
 — «Ես որ, վերջապես,
 Պիտի ուտեմ ձեզ» —
 Գալը մտածեց,
 Կտուրը ցատկեց,
 Ու պոչով, գլխով
 Նեղ խողովակով
 Ներքեւ ե իջնում,
 Վոր են ներքնում
 Խողերին հասնի,
 Իր գործը տեսնի:
 Բայց ներսում ահա
 Կըակի վրա
 Դրած ե կաթսան
 Լի ջրով լեռման:
 Յերբ մուրը թափվեց,
 Կաթսան մրոտվեց,
 Տեսավ Նաֆնաֆը,
 Վոր ագահ դալը
 Ուզում ե ներս դա
 Ու իրենց վերջ տա:
 — «Ես որ, վերջապես
 Ցույց կտամ յես քեզ» —
 Սաաց Նաֆնաֆը,
 Ժպտաց Նաֆնաֆը:

Բայց են Նիֆնիֆը,
 Են խեղճ Նուֆնուֆը
 Վախեցան գալից,
 Չորացան ահից,
 Մահճակալի տակ
 Խրվեցին նորից,
 Պոչերը բարակ
 Դողացին նորից:
 Նաֆնաֆը նայեց
 Բարձր ծիծաղեց,
 Բաց արեց կաթսան
 Լի ջրով լեռման,
 Ու են գալը չար
 Իր պոչով լերկար —
 Շրը՝ մի — ջրի մեջ,
 Յեռման ջրի մեջ:



Ու վոր չգոռաց,
 Ու վոր չվոռնաց,
 Դուրս թռան իսկուն
 Աչքերը բնից,
 Ու կախվեց լեզուն
 Նըա բերանից:

Ամբողջ թափով վեր թռավ նա,
 Ծխնելուզով դուրս յեկավ նա
 Ու սեացած, սև մուր դարձած,
 Կտրի ծերից գլորվեց ցած,
 Յերեք անգամ գլխի վրա
 Կաղկանձելով շուռ յեկավ նա,
 Պոչի վրա սող-սող գնաց,
 Տեղում մի պահ նստած մնաց,
 Ապա ցատկեց ու գոռալով
 Փախավ, գնաց ճանապարհով:
 Խողիկները ես անգամ
 Դուռը բացին, դուրս յեկան,
 Պար բռնեցին,
 Ու յերգեցին, —
 — «Յերբեք չի գա ել մեզ մոտ,
 «Ել մեզ մոտ, ել մեզ մոտ,
 «Են չար գալը անամոթ,
 «Անամոթ, անամոթ:
 «Հիսուն գալլ ել վոր լինի,
 «Վոր լինի, վոր լինի,
 «Խողիկի միս են տեսնի,
 «Չեն տեսնի, չեն տեսնի»:



ՀՀ Ազգային գրադարան
 NL0936001

ԳԻՒԸ 60 ԿՊՊ
20 ДЕК 1936

802

II

26987

СКАЗКА ПРО ТРЕХ ПОРОСЯТ
ГИЗ ССР АРМЕНИИ, ЕРЕВАН, 1936

